



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

20 մարտի 2020 թվականի թիվ 19-Ա  
ք. Երևան

#### «ՀԻՔՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏՐԱԳԻՐ ՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԻՔՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության կաբելային (մալուխային) հեռարձակման ցանցով սեփական արտադրության հեռուստաձրագիր հեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի մարտի 19-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ՀԻՔՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության դիմումը և տալ «Հիբրիդ Էդուքեյշըն» սեփական արտադրության հեռուստաձրագիրը հեռարձակելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ